ԿԱՐՃԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ Ա□Ս□ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ ՌՈՒԶԱՆՆԱ ԳԵՈՐԳԻԻ ԱԴԱՄՅԱՆԻ «*GERANIACEAE* JUSS. ԸՆՏԱՆԻՔԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

մասնագիտությունը՝ գ. 00. 05-«Բուսաբանություն, սնկաբանություն, էկոլոգիա»

Կարգաբանական բազմազանության ուսումնասիրությունները, ընտանիքների առանձին ներկայացուցիչների տարածվածության ֆիտոաշխարհագրական օրինաչափությունների և ընտանիքների և դրանց ցեղերի ձևավորման առանձահատկությունների բացահայտումը համարվում են հիմնարար ուսումնասիրություններ, որոնք չեն կորցնում իրենց արդիականությունը և հիմք են ծառայում կիրառական ուսումնասիրությունների համար: Այս հետազոտությունները մեծ նշանակություն ունեն ոչ միայն ֆիլոգենետիկ և էկոլոգիական հիմնախնդիրների լուծման համար, այլ նաև խիստ կարևոր են մի շարք լոկալ և գլոբալ բնապահպանական հիմնախնդիրների և առաջնահերթ կենսաբազմազանության պահպանության և բնական ռեսուրսների կայուն կառավարման համար: Բացառություն չէ նաև *Geraniaceae* ընտանիքի ներկայացված ուսումնասիրությունը:

Ուսումնասիրված թեմայի արդիականությունն ու անհրաժեշտությունը թե Հայաստանի, և թե համաշխարհային բուսաբանական ուսումնասիրությունների համար կասկած չեն հարուցում հաշվի առնելով, որ այս ընտանիքի որոշ ներկայացուցիչների տեսակային ինքնավարության, ինչպես նաև տեսակների միջև ազգակցական կապերի վերաբերյալ հետազոտողների միասնական տեսակետը բացակայում է, առկա էր զգալի փաստացի նյութ այս ընտանիքի ներկայացուցիչների ձևաբանության, փոշեհատիկաձևաբանության և աշխարհագրության վերաբերյալ, անհրաժեշտություն կար մշակել նոր դիխոտոմիկ որոշիչ Հայաստանի համար և կատարել տեսակների տարածվածության աշխարհագրական վերլուծություն, դեռևս բաց է համաշխարհային դասակարգման սխեմայի հիմնահարցը:

Ուսումնասիրությունը համապարփակ է և լիարժեք, ինչ մասին վկայում են ուսումնասիրությունների բավականին երկար ընթացքը, բացի կարգաբանական և աշխարհագրական ուսումնասիրություններից աշխատանքը հարստացված է կարիոլոգիական, տնտեսական նշանակության և գնահատման, հակասնկային հատկությունների բացահայտնման ուսումնասիրություններով:

Հեղինակի կողմից ուսումնասիրության նպատակների և խնդիրների օբյեկտիվ գնահատումն ու ձևակերպումը թույլ են տվել կատարել մեթոդների ճիշտ ընտրություն, հանգել հիմնավոր եզրակացությունների և կատարել արժեքավոր առաջարկներ: Իսկ դասական և կիրառական մեթոդների համադրությունը թույլ են տվել նորովի դիտարկել Հայաստանում *Geraniaceae* ընտանիքի ներկայացուցիչների կարգաբանական և աշխարհագրական չլուծված հիմնահարցերը:

Ատենախոսության տեսական և գործնական կարևորությունը կասկած չեն հարուցում, քանի որ ստացված արդյունքները ոչ միայն ունեն գիտական արժեք, այլ նաև օգտագործվելու են կրթական նպատակներով, ինչպես նաև կիրառություն կարող են ունենալ մարդկանց կենցաղային և առողջապահապական հիմնախնդիրների լուծման համար:

Ռ□Գ□ Ադամյանի ատենախոսությունը կազմված է ներածությունից, 8 գլուխներից, եզրակացություններից և հավելվածից:

Ծանոթանալով ատենախոսության գլուխներին ակնհայտ է դառնում, որ հեղինակը տիրապետում է բույսերի կարգաբանության թե պատմությանը, թե ուսումնասիրման դասական և կիրառական մեթոդներին, ինչն էլ թույլ է տվել ստանալ հավաստի արդյունքներ և կատարել արժեքավոր եզրակացություններ:

Այս ամենի հետ մեկտեղ պետք է նշել, որ ներկայացված ատենախոսությունը զերծ չէ բացթողումներից և թերություններից: Այսպես.

1. Աշխատանքում չի նշվում արդյոք ուսումնասիրությունների ժամանակ նոր տեսակ կամ ենթատեսակ հայտնբերվել/նկարագրվել է, թե ոչ: Արդյոք հայտնի տեսակների համար հայտվաբերվել են նոր աճելավայրեր:
2. Գլուխ 1-ի 1-ին ենթագլխում հարևան երկրների ֆլորաներում *Geraniaceae* ընտանիքի համեմատական վերլուծություն ներկայացնելիս որոշ երկրների հետ բերված է

ընդհանուր տեսակների թիվը, մյուսների դեպքում այն բացակայում է: Ցանկալի է ունենալ ընդհանրական մոտեցում:

3. Գլուխ 1-ում նշված չէ որ բացի բերված մեթոդներից կան նաև այլ կիրառական մեթոդներ, որոնք ունեն լայն տարածում և կարևոր նշանակություն ժամանակակից կարգաբանական ուսումնասիրությունների համար:
4. Աշխատանքի համար ինչու չեն ուսումասիրվել էլեկտրոնային/վիրտուալ հերբարիումային հավաքածուների և տվյալների բազաների նյութերը (օրինակ https://kiki.huh.harvard.edu/databases/specimen_index.html, http://sweetgum.nybg.org/science/vh/, http://ww2.bgbm.org/herbarium/default.cfm, GBIF և այլն)
5. Գլուխ 2-ում հեղինակը չի նշում, թե ընդհանուր առմամբ մոտ քանի հերբարիումային նմուշ է ուսումնասիրվել, որտեղից են ուսումնասիրվել տիպային նմուշները, ինչքան հերբարիումային նյութ է հավաքագրվել .իր կողմից և ինչ են արվել իր կողմից հավաքագրված հերբարիումային նյութերը: Նաև նշված չէ, թե որ թվականներին են կատարվել դաշտային աշխատանքները:
6. Աշխատանքը շատ ավելի արժեքավոր կլիներ, եթե կարգաբանական խնդիրները լուծելիս օգտագործվեին նաև մոլեկուլային կենսաբանության մեթոդները, առավել ևս որ աշխարհում նման փորձ արդեն իսկ կա, իսկ աշխատանքում անդրադարձը այս մեթոդներին անգամ տեսական մասում բացակայում է:
7. Գլուխ 4-ում տեսակների բնութագրերում օգտագործված է Ա. Լ. Թախտաջյանի ֆլորիսիտիկ շրջանները, իսկ գլուխ 5-ում /աղյուսակ 3 և 4/ արդեն Ֆայվուշի և Թամանյանի փոփոխված տարբերակը: Մոտեցումը պետք է լիներ ընդհանրական: Իհարկե ցանկալի է կլիներ բոլոր վերլուծությունների համար օգտագործել նոր շրջանացման սխեման, քանի որ բոլոր նոր աշխատանքներում օգտագործվում է այս շրջանացումը և համեմատական վերլուծության համար այն ավելի նպատակահարմար է:
8. Գլուխ 4-ում կարելի էր յուրաքանչյուր տեսակի .համար նշել առավել բնորոշ – 1-2 բնակմիջավայր՝ առաջնորդվելով Հայաստանի բնակմիջավայրերը մենագրությամբ:

9. Գլուխ 5-ում ցանկալի էր բացի տեքստային բացատրությունից վերլուծությունների արդյունքները ամփոփված լինեին նաև գծապատկերներում, իսկ բերված քարտեզներից յուրաքանչյուրը հաջորդեր իր նկարագրությանը կամ ընդհանրապես բոլորը միասին ընդգրկվեին հավելվածում:
10. Հասկանալի չէ, թե ինչով է պայմանավորված և հիմնավորված գլուխ 6-ում ուսումնասիրված 9 տեսակների ընտրությունը: Ինչպես նաև գլուխ 7-ում բերված հակասնկային հատկությունների ուսումնասիրությունների օբյեկտ հանդիսացող տեսակները և ախտածին սնկերը:
11. Հեղինակը ավելի շատ շեշտը դրել է ռուսալեզու գրականության վրա և անհամեմատ քիչ է օգտվել օտարալեզու գրականությունից, այն դեպքում, երբ առկա են բավականին մեծ թվով գիտական աշխատություններ, հատկապես վերջին տարիներին տպագրված, նվիրված այս ընտանիքի ներկայացուցիչների ուսումնասիրությանը:

Նշված թերություններն ու բացթողումները ամենևին չեն նվազեցնում կատարված աշխատանքի, սակայն պետք է, որ հեղինակը իր հետագա աշխատանքներում և ուսումնասիրություններում անդրադառնա նշված դիտողություններին:

Այս ամենի հետ մեկտեղ պետք է նշել, որ ատենախոսությունը գրված է գրագետ ռուսերենով, սեղմագիրը համահունչ է ատենախոսությանը, եզրակացությունները բխում են ստացված արդյունքներից: Ատենախոսության արդյունքները ամփոփված են 13 հրատարակված գիտական աշխատանքում: Ատենախոսությունը լիովին համապատասխանում է ՀՀ Բարձրագույն որակավորման կոմիտեի կանոնակարգին, իսկ Ռուզաննա Գեորգիի Ադամյանը արժանի է Գ. 00. 05 «Բուսաբանություն, սնկաբանություն, էկոլոգիա» մասնագիտությամբ կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՀՀ ԳԱԱ Ա.Լ. Թախտաջյանի անվ. Բուսաբանության ինստիտուտի
Երկրաբուսաբանության և էկո-ֆիզիոլոգիայի բաժնի ավագ գիտաշխատող,
Կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Ալլա Սամվելի Ալեքսանյան

25.10.2021